Ազգ
Azg

29 ՅՈՒՆԻՍ 2013 ՇԱԲԱԹ 110(5193)

ISSN: 1829-1651

# Թուրքական բանակին զրկեցին հեղաշրջում կատարելու իրավունքից

Թուրքիայի իշխանությունները որոշել են փոփոխել բանակի կանոնադրությունը` զինվորականներին զրկելով պետական հեղաշրջումներ կազմակերպելու հնարավորությունից: Կառավարությունը հունիսի 27-ին համապատասխան ուղղումներ է ներկայացրել խորհրդարանի քննարկմանը: Այդ մասին հաղորդում է Hurriyet Daily news կայքէջը:



Ուղղումները կսահմանափակեն զինվորականների մասնակցությունը ներքաղաքական կյանքին: Նրանց գլխավոր խնդիրը կդառնա Թուրքիայի պաշտպանությունն արտաքին սպառնալիքներից: Խորհրդարանն օրինագծի քննարկումը սկսելու է 2013-ի աշնանը` ամառային արձակուրդի ավարտից հետո:

Հեղաշրջում կատարելու իրավունքը թուրքական բանակին ընձեռվել էր 1960 թվականին, հիշեցնում է Ռոյթեր գործակալությունը: Այդ ժամանակվանից զինվորականները 4 անգամ փոխել են երկրի իշխանությունը:

Թուրքիայի կառավարությունը ուղղումները նախապատրաստեց 2013-ի մայիսին երկրում սկսված բողոքի զանգվածային ցույցերի պայմաններում: Սկզբում ցուցարարները հանդես էին գալիս Ստամբուլում «Գեզի» զբոսայգու քանդման դեմ: Ավելի ուշ ակտիվիստների շրջանում հայտնվեցին քաղաքական կարգախոսներ, եւ նրանք սկսեցին պահանջել վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հրաժարականը:

2003-ին իշխանության գլուխ անցած Էրդողանը առաջին անգամը չէ, որ փորձում է սահմանափակել զինվորականների ազդեցությունը: Նրա կառավարման ժամանակամիջոցում Թուրքիայում անցկացվել են մի շարք աղմկալի դատավարություններ` զինվորական հեղաշրջման փորձ կատարելու մեղադրանքով:

# Չի կարող բանակը Բաքվում ուժեղ լինել եւ սահմանում` թույլ




ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Սահմաններում հակառակորդի նկատմամբ հավասարակշռությունն այսօր հայկական կողմը պահում է որակական չափանիշներով, հակառակորդի հետ անմիջական շփման պարագայում մեր զինվորը պարտադրողի դերում է: Որքան էլ հակառակորդն ասում է` սպառազինվում է, միգուցե գաղտնի բան եմ ասում, սակայն առաջին գծում ես դա չեմ տեսնում: Չի կարող բանակը Բաքվում ուժեղ լինել եւ սահմանում` թույլ: Հակահարված տալու, կանխարգելիչ միջոցառումներ անելու խնդիր լինի` մեր զինվորը ամեն ինչ առաջին գծում շատ պատվով է իրականացնում: Որ մի դեպք է կատարվում, ասում են` պաշտպանության նախարարը պետք է հրաժարական տա: Իմ նման ճանապարհ անցած մարդիկ հայրենիքը պաշտպանելու գործից կյանքում հրաժարական չեն տա: Վերադասն է որոշում` լա՞վ է աշխատում, թե՞ վատ, կնշանակեն կամ կտեղափոխեն, սա նկատի ունեմ: Ինչ վերաբերում է ՊՆ կառավարման համակարգին, ի տարբերություն շատ-շատ համակարգերի, պաշտպանական կառավարումը իր բնույթից ելնելով` կայացած կառավարման համակարգերից մեկն է: Օգնենք, որ կայանա մեր կառավարման համակարգը», այս խոսքերը Հայաստանի պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանինն** են, որ նա ուղղել է Ազգային ժողովի պաշտպանության, Ազգային անվտանգության եւ ներքին գործերի հանձնաժողովի կազմակերպած «Թափանցիկությունը պաշտպանության կառավարման ոլորտում» խորհրդարանական լսումների մասնակիցներին երեկ: Այս լսումներին մասնակցում էին քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչները, եւ անգամ իրավապաշտպան **Ա. Սաքունցը** ձեռքբերում համարեց, որ այս էլ քանիերորդ անգամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ԱԺ տվյալ հանձնաժողովը հնարավորություն է տալիս ոլորտի խնդիրները քննարկելիս անձամբ հարցեր բարձրացնելու (հանձնաժողովի նախագահ` Կորյուն Նահապետյան) եւ տեսակետներ ներկայացնելու: Նրա հետ մեկտեղ այդ լսումներին հարցեր բարձրացրին ՀԿ սեկտորից **Ծովինար Նազարյանը**, **Ժաննա Ալեքսանյանը**, **Սոնա Այվազյանը** («Թրանսփարենսի ինթերնեշնլ»):

Իսկ Ս. Օհանյանը վերը նշված խոսքերն ասաց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մի շարք հարցերին պատասխանելուց հետո, այդ թվում` գոմեշի մսի սկանդալի եւ հանրային հնչեղության այլ հարցերի:

Տես էջ 3

# «Փակ շուկա». Հերթական ոչնչացված հուշարձանը

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Մենք չենք խոսում սովորական մի շենքի մասին, մենք խոսում ենք պետական հուշարձանի, մայրաքաղաքի լավագույն գոհարներից մեկի ճակատագրի մասին: Հետեւաբար այս քննարկմանը պետք է ներկա գտնվեր քաղաքի գլխավոր ճարտարապետը, գոնե մշակույթի փոխնախարարն ու Երեւանի փոխքաղաքապետներից մեկը: Ի վերջո, սա մի հարց է, որ վերաբերում է Երեւանին»: Ճարտարապետների միության նախագահ **Մկրտիչ Մինասյանի** բարկությունը տեղին էր եւ արդարացված: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում «Փակ շուկայի» ճակատագրին նվիրված քննարկմանը թեպետ հրավիրվել, սակայն չէին ժամանել ո՛չ մշակույթի նախարարության, ո՛չ դատախազության, ո՛չ էլ շուկայի սեփականատիրոջ ներկայացուցիչները: Քաղաքաշինության եւ քաղաքապետարանի ներկայացուցիչներն էլ միջին օղակներում աշխատող մարդիկ էին, որոնք ո՛չ հարց կարող էին լուծել, ո՛չ էլ իրենց գերատեսչություններում հարց բարձրացնել: «Այստեղ կարող է եւ չլինել մշակույթի նախարարության ներկայացուցիչը, քանի որ «Փակ շուկան» կարելի է արդեն հանել պատմական հուշարձանների ցուցակից իրենց անփութության, մեղավորության պատճառով: Այսքան գերատեսչություն ունենք, ոչ որ չկարողացավ կանգնեցնել այդքան գեղեցիկ հուշարձանի վերացումը:

Տես էջ 2

# Պարզվում է` ռուսները չեն հեռացել Տարտուսից

*Մոսկվան սաուդցիներին մեղադրեց ահաբեկիչներին աջակցելու մեջ*

ՌԴ պաշտպանության նախարարության սեփական «լավատեղյակ» աղբյուր վկայակոչելով` մոսկովյան «Վեդոմոստի» թերթը հունիսի 26-ին գրել էր, թե նախարարությունը սիրիական Տարտուս նավահանգստի նյութատեխնիկական ապահովման կետից դուրս է բերել ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական անձնակազմը: «Վեդոմոստիի» այդ հրապարակմանն անդրադարձավ նաեւ «**Ազգը**»: Մասնավորապես խոսվում էր այն մասին, որ Միջերկրական ծովում ռուսական ծովուժի օպերատիվ միավորման նավերը



կարող են պաշարները համալրել կիպրական Լիմասոլ նավահանգստում:

Այս կապակցությամբ ՌԴ պաշտպանության նախարարությունը հունիսի 27-ին պաշտոնական ճշգրտումներ է մտցրել Տարտուսի նավահանգստի նյութատեխնիկական ապահովման կետից ռուսաստանցի բոլոր զինծառայողների դուրսբերմանը վերաբերող տեղեկատվության մեջ:

Պաշտպանական գերատեսչությունում ՌԻԱ գործակալության թղթակցին տվել են հետեւյալ պարզաբանումը.

Տես էջ 2

# Անշարժ գույքի գները մայիսին Հայաստանում անփոփոխ էին

*Իսկ գործարքների քանակը նվազել է*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի` շուկայի վերլուծության տվյալների համաձայն, 2013-ի մայիսին, Հայաստանի անշարժ գույքի շուկայում իրականացվել է 14235 գործարք, ինչը 10 տոկոսով ցածր է նախորդ ամսվա` ապրիլի եւ 2,1 տոկոսով բարձր` 2012-ի մայիսի գործարքների համեմատ: Հիշեցնենք, որ փետրվարին եւ մարտին գործարքների քանակի զգալի աճ էր արձանագրվել: Սակայն ապրիլին, հիմա նաեւ մայիսին գործարքների քանակը նվազել է:

Օտարման գործարքների քանակը մայիսին ապրիլին համեմատ նվազել է 20,4 տոկոսով, իսկ անցյալ տարվա մայիսի համեմատ աճել` 10,2 տոկոսով: 3191 օտարման գործարքներից առուվաճառքներինը կազմել է 75,2 տոկոսը: Մնացածը նվիրատվություններն ու փոխանակություններն են: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 36,5 տոկոսն արձանագրվել է Երեւան քաղաքում, իսկ առուվաճառքի գործարքների 58,9 տոկոսն արձանագրվել է բազմաբնակարան շենքերի բնակարանների նկատմամբ: 2013-ի ապրիլի համեմատ, մայիսին բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 31,5 տոկոսով, իսկ նախորդ տարվա մայիսի համեմատ` 10,2 տոկոսով:

Բնակարանների շուկայական միջին գները Երեւանում այս տարվա մայիսին ապրիլի համեմատ չնչին չափով աճել են` 0,2 տոկոսով: Ըստ վարչական շրջանների, Երեւանում բնակարանների 1 քմ մակերեսի միջին շուկայական գները այսպիսին են եղել.

Տես էջ 3

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մայիս 2012 թ. | մայիս 2013 թ. | ապրիլ 2013 թ. |
| Կենտրոն | 412000 | 428000 | 428000 |
| Արաբկիր | 339100 | 355500 | 355500 |
| Քանաքեռ-Զեյթուն | 266100 | 282300 | 282200 |
| Նոր Նորք | 228400 | 251000 | 250000 |
| Ավան | 238050 | 259100 | 258050 |
| Էրեբունի | 236050 | 248500 | 248200 |
| Շենգավիթ | 235100 | 254250 | 254000 |
| Դավթաշեն | 260000 | 274200 | 273500 |
| Աջափնյակ | 227000 | 247200 | 246500 |
| Մալաթիա-Սեբաստիա | 226000 | 239000 | 238550 |
| Նուբարաշեն | 140200 | 151000 | 151000 |
| Միջինը Երեւանում (բացի Նորք-Մարաշից) | 255300 | 271900 | 271400 |

# Գնաճը հունիսին Հայաստանում 6,5 տոկոս

2013-ի հունիսին 2012-ի հունիսի նկատմամբ գնաճը կազմել է 6,5 տոկոս: Այս ցուցանիշն է հրապարակել ազգային վիճակագրական ծառայությունը, ներկայացնելով սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2012-ի հունիսին: Այսինքն, ինչպես եւ կանխատեսվում էր, գնաճը Հայաստանում դուրս է եկել ԿԲ մասնանշած 4 տոկոս գումարած-հանած 1,5 տոկոս նպատակային միջակայքից: Միաժամանակ, 2013-ի հունիսին մայիսի համեմատ գները մնացել են անփոփոխ, 2012-ի դեկտեմբերի համեմատ գնաճը կազմել է 2,7 տոկոս, իսկ 2013-ի հունվար-հունիսին 2012-ի հունվար-հունիսի համեմատ գնաճը կազմել է 4,1 տոկոս:

Պարենային ապրանքների գները 2013-ի հունիսին նախորդ տարվա հունիսի համեմատ աճել են 9 տոկոսով, իսկ այս տարվա մայիսի համեմատ՝ նվազել 0,6 տոկոսով, ոչ պարենային ապրանքներինը՝ 2012-ի հունիսի նկատմամբ աճել են 4,8 տոկոսով, իսկ մայիսի նկատմամբ՝ 0,1 տոկոսով, ծառայությունների գները նախորդ տարվա հունիսի համեմատ աճել են 3,4 տոկոսով, այս տարվա մայիսի համեմատ՝ 0,9 տոկոսով:

Պարենային ապրանքներից հունիսին մայիսի նկատմամբ արձանագրված 0,6 տոկոս գնանկման վրա անմիջական ազդեցություն է թողել բանջարեղենի եւ կարտոֆիլի 8,1 տոկոս եւ շաքարավազի 1 տոկոս գնանկումը:

Կաթնամթերքի դեպքում հունիսին մայիսի նկատմամբ արձանագրվել է 2 տոկոս գնաճ, իսկ անցյալ տարվա հունիսի նկատմամբ՝ 10,1 տոկոս գնաճ: «Լոռի» պանրի գինը մայիսի համեմատ նվազել է 0,7 տոկոսով, «Չանախինը»՝ 0,2 տոկոսով: Յոգուրտի գինը աճել է 13,4 տոկոսով, թթվասերինը՝ 11,3 տոկոսով, թարմ կաթինը՝ 16,7 տոկոսով, մածունինը՝ 17,7 տոկոսով, կաթնաշոռինը՝ 18,3 տոկոսով: Ձվի գները մայիսի համեմատ նվազել են 0,3 տոկոսով: Մսամթերք ապրանքախմբում մայիսի նկատմամբ արձանագրվել է 0,6 տոկոս գնաճ: Մրգի ապրանքախմբում հունիսին մայիսի համեմատ արձանագրվել է 0,4 տոկոս գնաճ, իսկ անցյալ տարվա հունիսի նկատմամբ՝ 18,4 տոկոս գնաճ:

Հիշեցնենք, որ սպառողական գների ինդեքսը ազգային վիճակագրական ծառայությունը որոշում է հիմք ընդունելով շուրջ 500 ապրանքների եւ ծառայությունների գների դինամիկան:

Ա. Ս.

# Տեղեկանում ենք Ադրբեջանի կոտորածների մանրամասնություններին

Գրող, հրապարակախոս, Մեյնի Հայ դատի գրասենյակի ակտիվ աշխատակից Աննա Աստվածատրյան-Թուրկոտտեն Միչիգանի Հայ դատի կազմակերպությամբ Բիրմինգհեմի «Գործերի աշխարհում» (սեփականատեր Հակոբյան) առեւտրի տանը հունիսի 15-ին կայացած հանդիպման ժամանակ ներկայացրել է իր «Ոչ մի տեղ: Տարագրության պատմություն» գիրքը, որտեղ նկարագրված են Բաքվի, Սումգայիթի եւ Կիրովաբադի կոտորածների մանրամասնությունները: Նա իր փորձառության վրա հիմնվելով, որպես Բաքվի ջարդերը վերապրող, կոչ է արել ավելի միասնականորեն եւ հարատեւորեն աշխատել հանուն Լեռնային Ղարաբաղի պետականության ու անկախության ճանաչմանը:

Ինչպես հայտնի է, Մեյնը այս տարվա ապրիլին ճանաչեց ԼՂՀ-ի անկախությունը: Դրանից բացի՝ ԼՂՀ-ին ճանաչել են նաեւ Ռոուդ Այլենդը, Մասաչուսեթսը եւ Լուիզիանան:

Երեկոն ավարտվել է հարց ու պատասխան բաժնով:

Հ. Ծ.

# «Փակ շուկա». Հերթական ոչնչացված հուշարձանը

*1-ին էջից*

Մեզ ասում են՝ ռեստավրացիա ենք անում, բայց սա ռեստավրացիա չէ, սա հուշարձանի ոչնչացումն է», ասում Մինասյանը՝ հավելելով, որ իրենք երեք անգամ նամակ են գրել հանրապետության նախագահին, ներկայացրել վիճակը, մտահոգությունները, սակայն նախագահի աշխատակազմից պատասխանել են, որ շուկան հանրությանն է վերադարձվելու նույն տեսքով: Մինասյանը լուսանկարներ է ցուցադրում, որտեղ շուկայի ներսում արդեն հարկաբաժիններ են կառուցում: Մինասյանին աբսուրդի հասնող պատասխան են տվել, թե հետո այդ հարկաբաժինները քանդվելու են: Ճարտարապետը զարմացել է. «Էլ ինչո՞ւ եք կառուցում, որ պետք է քանդվի» հարցին պատասխան չի հնչել: Ճարտարապետներին զարմացրել է նաեւ դատախազության պատասխանը: «Կատարվածի առնչությամբ հանցանքի տարրեր չենք տեսնում»:



Քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչ **Գագիկ Սարգսյանի** մեկնաբանությամբ՝ իրենց գերատեսչությունը իրավասությունների շրջանակում ամեն ինչ արել է: «Մենք իրավունք չունենք շինարարության թույլտվություն տալ, այն տալիս է Երեւանի քաղաքապետը: Քաղաքապետարանը շինարարություն իրականացնելու համար թույլտվություն տվել է զրո նիշից ներքեւ՝ ստորգետնյա հատվածում շինարարություն իրականացնելու համար, մինչդեռ սեփականատերը սկսել է նաեւ վերգետնյա հատվածում էլ շինարարություն անցկացնել, ինչի թույլտվություն նա չունի: Նախարարությունը երկու անգամ դիմել է Երեւանի քաղաքապետարանին՝ պահանջելով դադարեցնել շինարարությունն ու պատմական հուշարձանը բերել նախկին տեսքի: Շինարարական աշխատանքների հետեւանքով մի քանի կամարներ են փլվել, սակայն քաղաքապետարանն ընդամենը սիմվոլիկ գումարով երկու անգամ տուգանել է սեփականատիրոջը: «Մենք այլ գործառույթ չունեինք, որ կատարեինք», ասում է նախարարության ներկայացուցիչը:

Քաղաքապետարանի ներկայացուցիչ, ճարտարապետ **Մելիք Քարամյանն** էլ ասաց, որ հունիսի 7-ից շինարարությունը դադարեցված է: Պարզվում է՝ շուրջ մեկ ամսվա ընթացքում քաղաքապետարանն ընդամենը ապամոնտաժել է վերգետնյա շինության մի հատվածը՝ ընդամենը մի քանի ձող: Քաղաքապետարանի աշխատակիցը խոստովանեց, որ ինքը չի մտել շուկայի տարածք ու չգիտի, թե այնտեղ ինչ է կատարվում: Վստահաբար՝ շուկայի ներսի իրավիճակի մասին տեղյակ չեն նաեւ իր վերադասները: Շուկա մտնելու իրավունք Երեւանում գրեթե ոչ ոք չունի, փակ է, հարեւանությամբ աշխատող բանվորներն էլ թույլ չեն տալիս, որ մտնես ներս ու տեսնես, թե ինչ է կատարվում:

Իրականում այս ու նմանատիպ քննարկումները ուշացած են, արդեն 1,5 տարի շուկան քանդվում է, սակայն պետական գերատեսչություններից որեւէ մեկը ձայն չի հանում, կատարվում է ծածկադմբոց, ու մի գերատեսչություն մեղքը գցում է մեկ այլ գերատեսչության վրա: Շահում է սեփականատեր Սամվել Ալեքսանյանը, տուժում Երեւանն ու երեւանցին:

***Հ. Գ.*** *Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողությունից հետո մոտեցա մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանին: «Այսօր մայրաքաղաքի համար կարեւորագույն հարցերից մեկը «Փակ շուկայի» պահպանությունն էր: Ո՞նց է լուծվելու խնդիրը» հարցին տիկին Պողոսյանն ասաց. «Գիտեք, ես հույսով՝ հարցը կլուծվի այնպես, ոնց որ ես կասեմ»:*

ՎԱՐԿ, ՏՈԿՈՍՆԵՐ, ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ...

# Անախորժություն ու գաղտնիքներ «Արցախ» բանկում

**«Վաչագան-Գեւորգ» ընկերության տնօրեն Վաչագան Մկրտչյանն իր ընկերության շինարարական գործունեության ընթացքում աշխատել է տարբեր բանկերի հետ, այդ թվում եւ «Արցախ» բանկի հետ, ու մինչ 2010 թվականը կարողացել է հաջողությամբ մարել վերցված վարկերը: Սակայն 2010-ին սկսված տնտեսական ճգնաժամի պատճառով չի կարողացել ժամանակին մարել տոկոսներ, եւ արդեն 2011-ին խնդրանքով դիմել է «Արցախ» բանկին, որպեսզի իջեցնեն իր վարկի տոկոսներն ու երկարացնեն վարկի մարման ժամկետը: Սակայն բանկից ստացել է պատասխան, որ Կենտրոնական բանկը նման գործարք թույլ չի տալիս: Այնուհետեւ Վաչագանը տոկոսները մարել չի կարողացել: Իսկ «Արցախ» բանկը նրա պարտքի դիմաց վերցրել է Վաչագանի բիզնեսը, վաճառքի համար նախատեսված շինանյութն ու երկու մեքենան: Սակայն Վաչագանը խոստացել է, որ կշարունակի աշխատել եւ մարել պարտքը:**

**Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ Վաչագան Մկրտչյանի շահերի պաշտպան Մարիաննա Եղիազարյանն ասաց, որ շուկայականից ցածր գնով է վերցվել այն շինությունը, որտեղ իրականացվում էր Վաչագանի բիզնեսը, այդ թվում եւ գրավադրված շարժական գույքն ու ապրանքն ամբողջությամբ:**

**Այսօր գրավադրված է նաեւ Վաչագան Մկրտչյանի բնակարանը, սակայն արդեն 2 տարի Վաչագանը «Արցախ» բանկից չի կարողանում իմանալ, թե որքան տուգանք է գումարվել իր գրավադրված գույքին ու որքան է կազմում իր պարտավորությունը:**

**Ըստ փաստաբանի՝ Վաչագան Մկրտչյանը գրավոր 4 դիմում է ուղարկել բանկին, սակայն հստակ պատասխան չի ստացել, ու քանի որ «Արցախ» բանկից ստացված փաստաթուղթ չունեն, հետեւաբար չեն կարող դիմել դատարան առանց իրավիճակը բնութագրող փաստաթղթի, իսկ բնակարանն արդեն հանել են աճուրդի:**

**Վաչագան Մկրտչյանի ու «Արցախ» բանկի Սայաթ-Նովա փողոցի մասնաճյուղի կառավարիչ Զորիկ Ավետիքյանի միջեւ նաեւ եղել է անախորժություն: Վաչագանը պատմեց, որ կառավարիչն իր վրա նույնիսկ զենք է բարձրացրել այն ժամանակ, երբ ինքը պարզաբանում է պահանջել իր կնոջ մոտ նրա արած հայտարարությունների համար: Զորիկ Ավետիքյանը Վաչագանի հասցեին ասել է, թե նրա պարտքերի պատճառը թղթախաղն ու սիրուհիներն են:**

Ի. Պ.

# Պարզվում է՝ ռուսները չեն հեռացել Տարտուսից

*1-ին էջից*

«Տարտուսը առաջվա պես մնում է Միջերկրական ծովում ռուսական նավերի բազավորման ու նորոգման պաշտոնական կետը եւ շարունակում է կատարել իր խնդիրները: Սիրիական Տարտուսի նյութատեխնիկական ապահովման կետից անձնակազմի դուրսբերմանը վերաբերող պնդումը ԶԼՄ-ներում անչափ սխալ է ներկայացված ռեալ իրավիճակի տեսակետից»:

Ըստ որում նախարարությունը խոստովանել է, որ Տարտուսում չկան ռուսաստանցի զինծառայողներ, քանի որ նավերի եւ առափնյա օբյեկտների սպասարկմամբ զբաղվում են բացառապես քաղաքացիական մասնագետներ: «Այդ անձնակազմն առաջվա պես աշխատում է սովորական ռեժիմով: Տարտուսից նրա տարհանման մասին որեւէ խոսք չկա», ընդգծել են ՌԴ պաշտպանության նախարարությունում:

Տարտուսի նավահանգստի նյութատեխնիկական ապահովման կետը Ռուսաստանի ծովուժի միակ գործող բազան է նախկին ԽՍՀՄ տարածքից դուրս:

Ինչ վերաբերում է բուն Սիրիայի հետ կապված զարգացումներին, ՌԴ արտգործնախարարությունը հունիսի 28-ին Սաուդյան Արաբիային մեղադրել է Սիրիայում միջազգային ահաբեկիչներին աջակցելու մեջ: Այդ մասին ասվում է ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչի հայտարարության մեջ, որը հրապարակվել է գերատեսչության կայքէջում:

ԱԳՆ-ում հայտարարել են, որ Սաուդյան Արաբիան ֆինանսավորում է միջազգային ահաբեկիչներին եւ ծայրահեղական խմբավորումներին, ինչպես նաեւ նրանց զենք է մատակարարում, որպեսզի «Սիրիայի ժողովրդի արյան եւ տառապանքների հաշվին իրականացնի սեփական աշխարհաքաղաքական նկրտումները»:

Սա ՌԴ ԱԳՆ-ի պատասխանն է Էր Ռիադին, որը Ռուսաստանին ամբաստանել էր «Սիրիայում զանգվածային սպանությունների անսահմանափակ ռազմական օժանդակություն ցույց տալու» մեջ:

Սաուդյան Արաբիան մտնում է «Սիրիայի բարեկամների» խմբի՝ այն պետությունների կազմակերպության մեջ, որոնք պայմանավորվել են սիրիական ընդդիմությանն օգնել զենքով, հանդերձանքով եւ նյութերով: Ռուսաստանն իր հերթին աջակցում է պաշտոնական Դամասկոսին, որն իր հակառակորդներին անվանում է ահաբեկիչներ:

Ըստ ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հունիսի 28-ին այն միտքն է արտահայտել, որ ՄԱԿ-ը պարտավոր է քննել սիրիացի ապստամբներին լիբիական զենքի մատակարարմանը վերաբերող հաղորդումները, որոնք հրապարակվել են ԱՄՆ-ի եւ այլ երկրների լրատվամիջոցներում:

Պ. Ք.

**Սրբագրում եւ խմբագրում**
ամեն ծավալի ու
բովանդակության
հայերեն տեքստերի,
գրքերի
(094 48-68-03)

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Չի կարող բանակը Բաքվում ուժեղ լինել եւ սահմանում՝ թույլ

*1-ին էջից*

Լսումներին ներկա էր եւ մի դասախոսական որակի ելույթ արտասանեց Զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության Ժնեւի կենտրոնի տնօրենի տեղակալ **Ֆիլիպ Ֆլուրին**, ով, ի դեպ, սեմինարից հետո բավական ժողովրդավարական մոտեցումներով ճաշեց Ազգային ժողովի բուֆետում եւ սովորական կանաչ լոբի ու կարտոֆիլ կերավ լրագրողներիս ընկերակցությամբ: Ֆլուրին իր խոսքում մի քիչ գովեց Հայաստանի հետ ոլորտային համագործակցությունը՝ նշելով, թե Հայաստանն ակտիվ մասնակից է եւ ոչ բնավ ասիմետրիկ գործընկեր: Ու մեկուսացված էլ չէ, թեեւ ՀԱՊԿ-ի անդամ է՝ դա չի սահմանափակում եվրոպական ուղղությամբ ոլորտային համագործակցության մեջ ակտիվությունը:

Իսկ լսումները բացելուց հետո պաշտպանության նախարարը նշել էր ԱԺ հանձնաժողովի այն դրական մոտեցումը, որով այս կարգի լսումներով ապահովվում է պատգամավորների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ լայն հանրության ընկալումն ու իրազեկվածությունը՝ պաշտպանության ոլորտի առանձնահատկությունների եւ կառավարման թափանցիկության թույլատրելիության ողջամիտ սահմանն ի վերջո նշելու առումով, քանի որ թափանցիկությունը պետք է լինի այն աստիճան, որքան չի սպառնա երկրի անվտանգությանը: Քանզի հասարակությունը երբեմն այնպիսի թափանցիկություն կարող է պահանջել, որը նույն հասարակության անվտանգությունից կարող է չբխել. «Չնայած գնումային գործընթացը շարունակվում է համարվել ամենառիսկայիններից մեկը, բայց դրա կենտրոնացվածության արդյունքում ստորաբաժանումները սկսում են զեկուցել իրենց գործունեության այլ ասպեկտներ եւս: Կան տեխնիկական առաջարկներ զորակոչիկների բաշխման գործընթացում բացառել մարդկային գործոնը, այլ դա իրականացնել տեխնիկական գործընթացի ներդրմամբ, կամ վիճակահանության: Մեր խնդիրն է ապահովել այս գործընթացի էվոլյուցիան»:

Իսկ քաղաքացիական սեկտորի ներկայացուցիչները հատկապես գնումների եւ այլ ոլորտներում ՊՆ-ում կոռուպցիոն ռիսկերի բացառումը կապում էին միայն ու միայն թափանցիկության հետ եւ առաջարկում այդ ուղղությամբ հստակեցնել մեխանիզմները, մանավանդ՝ պետական եւ ծառայողական գաղտնիքների հետ կապված թույլատրելիության հստակ սահման գծել, որպեսզի կոռուպցիան երբեմն չթաքնվի պետական գաղտնիքի շղարշի ներքո:

Ս. Օհանյանը ներկայացնում էր վերջին տարիների քայլերը, որոնք, իր կարծիքով, նվազեցրել են կոռուպցիոն ռիսկերը: Գնումների գործընթացը ստեղծման օրից տարեցտարի բարելավվում է՝ պատվերները կազմելուց սկսած, մրցույթների անցկացումով եւ մատակարարման խնդիրներով վերջացրած, չնայած դեռ այսօր էլ ոլորտում խնդիրներ կան: Հարց հնչեց մեկ անձից գնումների շատ մեծ ծավալների մասին: Ըստ Օհանյանի՝ նախկինում մինչեւ 100 կազմակերպության հետ էին գնումները, էլեկտրոնային գնումներ սկսելուց հետո՝ արդեն մինչեւ 400 կազմակերպություններ են մասնակցում գնումներին:Պայմանագրերն ընդհատվում են մատակարարման ժամկետները կոպիտ խախտողների հետ, չնայած մատակարարման անընդհատությունն ապահովելու խնդրի հետ կապված թեթեւ խախտումներ անողների հանդեպ ավելի մեղմ են: Այնպես որ՝ մեկ անձից գնումների դեպքերը կամաց-կամաց նվազում են՝ ամենալավ կամ անհապաղ առաջարկները բացառյալ: Սպառազինության եւ ռազմական տեխնիկայի գնումները ռազմական գաղտնիք են պարունակում, այնպես որ դրսից մեկ անձից կամ կազմակերպությունից գնումները երկրի ղեկավարությունից համապատասխան հավանության են արժանանում եւ համապատասխան պայմանագրերի առկայությամբ են (ասենք, որ շատերս կարող ենք թվել այն օլիգարխներին, որոնց համար պաշտպանության նախարարության մեծաքանակ մշտական գնումը ապահովում մշտական գերշահույթ):

Գոմեշի մսի մատակարարման հայտնի սկանդալի հետ կապված Օհանյանը տվեց իր բազմակի պարզաբանումներից մեկը, թե փաստն արձանագրվել է զինված ուժերի ղեկավարության կողմից, հետո դատախազության հետ են աշխատել ու բազմաթիվ մարդիկ վարչական պատիժ են կրել՝ անկախ նրանից, որ հարցը զինվորական դատախազության ներքո է:

«Մենք այնպիսի փուլում ենք, որ նաեւ գաղափարական ու ինքնագիտակցության փոփոխություններ են տեղի ունենում. եթե նախկինում զորամասերում կամ որեւէ մի տեղ կատարվում էր հանցագործություն, կային մարդիկ՝ ուրախանում էին, հնարավոր էր «աշխատել»: Էն մարդը, ով կուզեր գումար աշխատեր զինվորի վրա, նրա գիտակցությունը փորձում ենք փոխել եւ ասել՝ «Գիտե՞ս, էսօր մեզ ոչ թե շատ արտակարգ պատահարներն են ձեռնտու, այլ քիչը»: Նրա՛ն պետք է փորձենք դաստիարակել», հավաստիացրեց Հայաստանի պաշտպանության նախարարը:

Հաջորդ զորակոչի ժամանակ ծառայության վայրեր զինակոչիկներն ուղարկվելու են վիճակահանությամբ՝ այդպիսով բացառելով զորակոչի համար վայրեր ուղարկելու խնամի-ծանոթբարեկամական իրարանցումը: Մաքրվել են նաեւ զորակոչային բժշկական հանձնաժողովները, հիմա այդ հանձնաժողովներում ընդգրկվել են ռազմական բժիշկներ եւ ռազմական ոստիկանությունից օպերատիվ աշխատանքներ կատարող մարդիկ. «Հաս-հաս ամեն մի գործը վերահսկում ենք», հավաստացրեց պաշտպանական գերատեսչության ղեկավարը՝ քաղաքացիականների հարցերին պատասխանելով ու հավելելով, որ երբ զինակոչիկի հիվանդության հետ կապված վիճելի խնդիր է լինում՝ այժմ նրան զորակոչում են հոսպիտալ, որ այնտեղ քննեն մինչեւ վերջ: Օրինակ՝ նախորդ տարի վիճահարույց 23 հոգուց 12-ին տարել են բանակ, որովհետեւ հիմքում կոռուպցիան է եղել, եւ սխալ փաստաթղթեր են առկա եղել: Օհանյանը վերահսկողությունը բազմապատկել առաջարկեց քաղաքացիական կառույցներով:



ՄՈՆՐԵԱԼ

# Հայր Արեն Ճեպեճյանը՝ Կանադայի թեմի նորընտիր առաջնորդ



**«Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ, մայիսի 24-25-ին Մոնրեալի Սբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում կայացած տարեկան պատգամավորական ժողովում կանադահայոց թեմի առաջնորդ է ընտրվել Չիկագոյի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ՝ հայր Արեն Ճեպեճյանը: Ժողովին մասնակցել են թեմի բոլոր հոգեւորականներն ու բոլոր եկեղեցիների պատգամավորները:**

**Ըստ Կանադայի Հայաստանյայց առաքելական եկեղեցու կանոնադրության՝ թեմական խորհրդի կողմից նախօրոք պատրաստված է եղել առաջնորդական թեկնածուների եռանուն ցանկ (Բագրատ եպս. Գալստանյան, Տաճատ եպս. Յարդըմյան եւ Արեն վրդ. Ճեպեճյան), որը վավերացված է եղել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից:**

**Ճեպեճյանը ծնվել է 1966-ին Դեթրոյթում, հոգեւորականի ընտանիքում: Հոր քահանա ձեռնադրման առիթով 1970-ին տեղափոխվել է Սփրինգֆիլդ (Մասաչուսեթս): Այնուհետեւ ընտանիքը 1983-ին դարձյալ տեղափոխվել է, այս անգամ՝ Ֆլորիդա, որտեղ Արեն Ճեպեճյանը հաճախել է Մայամիի Սենտ Թոմաս համալսարանը: Այդ ընթացքում մեկ կիսամյակ նա դասընթացների է հետեւել նաեւ Իսպանիայում:**

**1989-1990 թվերին սովորել է Մայր աթոռ Սբ Էջմիածնում, որից հետո վերադարձել է Մ. Նահանգներ: Մասնակցել է եկեղեցիների համաշխարհային խորհրդի ժողովներին: 1998-ից նշանակվել է Չիկագոյի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հոգեւոր հովիվ: Չիկագոյի կրոնական առաջնորդների խորհրդի անդամ է եւ հիմնադիր անդամ Չիկագոյի Հազարամյակի էկումենիկ հանձնախմբի: Մասնակցել է 1999-ին Երեւանում կայացած Ազգային եկեղեցական ժողովին՝ ընտրելու համար Ամենայն հայոց 132-րդ կաթողիկոսին՝ Գարեգին Ա-ին:**

Հ.Ծ.

# Ապրում է մարդը



**Մուշեղ Ներսեսի Դանիելյանը ծնվել է Ղարաբաղի Գյուլյաթաղ գյուղում 1900 թ.: 1924 թ. աշխատել է Լեռնային Ղարաբաղի ԼԿԵՄ մարզկոմի քարտուղար: 1918 թ. ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը:**

**1928 թ. անցել է կուսակցական աշխատանքի եւ զբաղեցրել մի շարք պաշտոններ:**

**1934 թ. նշանակվել է ՀԿ(բ)Կ Բասարգեչարի (Վարդենիսի) շրջկոմի քարտուղար:**

**1935 թ. ընտրվել է Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար եւ ՀԿ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի անդամ:**

**1937 թ. ՀԿ(բ)Կ կենտկոմի պլենումի որոշմամբ ընտրվել է ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ:**

**Մ. Դանիելյանը չհասցրեց կատարել հայրենիքի կողմից իրեն վստահված պատասխանատու աշխատանքը, վրա հասավ չարաբաստիկ 1937 թվականը...**

**1955 թ. Մուշեղ Դանիելյանը հետմահու արդարացվել է:**

**Երեւանի ավագանու որոշմամբ թույլատրվել է պետական գործիչ Մուշեղ Դանիելյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակ փակցնել մայրաքաղաքի Աբովյան փող. 33 շենքի ճակատային մասում:**

**Որոշումն օրերս ի կատար ածվեց. հուշատախտակը փակցվեց: Վաղը նրա հարազատներն ու բարեկամները հանդիսավորապես կնշեն այդ փաստը:**

# Անշարժ գույքի գները մայիսին Հայաստանում անփոփոխ էին

*1-ին էջից*

Մարզերում, բացառությամբ Երեւանի, մայիսին վաճառվել են 322 բնակարաններ, որոնց քանակը ապրիլի համեմատ նվազել է 2,7 տոկոսով, իսկ 2012-ի մայիսի համեմատ աճել՝ 13 տոկոսով: Գներն այստեղ մայիսին գրեթե չեն փոխվել:

Երեւանից հետո, ամենաթանկ բնակարանները մայիսին եղել են Ծաղկաձորում, որտեղ 1 քմ մակերեսի շուկայական գինը կազմել է 292 հազար դրամ: Աբովյանում 1 քմ գինը 155 հազար հազար դրամ է կազմել, Վաղարշապատում (Էջմիածնում)՝ 154 հազար դրամ, Նոր Հաճընում՝ 128 հազար դրամ, Եղեգնաձորում՝ 123 հազար դրամ, Արմավիրում եւ Գորիսում ՝ 121 հազար դրամ, Իջեւանում 118 հազար դրամ 1 քմ դիմաց ցուցանիշներով:

2013-ի մայիսին Հայաստանում գրանցվել է անհատական տների առուվաճառքի 332 գործարք, որից 83-ը՝ Երեւանում: Մայրաքաղաքում անհատական տների առուվաճառքի գործարքների քանակը 2013-ի ապրիլի համեմատ նվազել է 4,6 տոկոսով, իսկ մարզերում միասին աճել՝ 23,1 տոկոսով: 2012-ի մայիսի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը Երեւանում նվազել է 32 տոկոսով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 5,7 տոկոսով:

Միջինացված 250 քմ շինության մակերես եւ 400 քմ տնամերձ ունեցող անհատական տների 1 քմ-ի միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2012-ի մայիսին ապրիլի համեմատ Երեւանում մնացել են անփոփոխ: Ըստ Երեւանի վարչական շրջանների, գների պատկերը հետեւյալն է եղել.

| Վարչական շրջաններ | Միջին գները (դրամ) | | |
|---|---|---|---|
| | մայիս 2012 թ. | մայիս 2013 թ. | ապրիլ 2013 թ. |
| Կենտրոն | 461500 | 476100 | 476100 |
| Արաբկիր | 366900 | 383000 | 383000 |
| Քանաքեռ-Զեյթուն | 278900 | 295000 | 295000 |
| Նորք-Մարաշ | 305500 | 319200 | 319200 |
| Ավան | 258900 | 270500 | 270500 |
| Էրեբունի | 227800 | 239500 | 239500 |
| Շենգավիթ | 244500 | 255000 | 255000 |
| Դավթաշեն | 262800 | 276000 | 276000 |
| Աջափնյակ | 237800 | 250050 | 250050 |
| Մալաթիա-Սեբաստիա | 226100 | 238000 | 238000 |
| Նուբարաշեն | 144500 | 150500 | 150500 |
| Միջինը Երեւանում (բացի Նոր Նորքից) | 274100 | 286600 | 286600 |

Մարզերում միջինացված են 200 քմ շինության եւ 1000 քմ տնամերձ մակերեսով անհատական տների վերաբերյալ գները: Այստեղ միջին գները մայիսին ապրիլի համեմատ գրեթե անփոփոխ են: Ամենաթանկ անհատական տները Երեւանից հետո Ծաղկաձորում են՝ 1 քմ-ն 305 հազար դրամ: Երկրորդը Աբովյանն է 1 քմ-ն 157 հազար դրամ, երրորդը Վաղարշապատը, որտեղ 1 քմ-ն կազմել է 153 հազար դրամ: Ապա գալիս են Աշտարակը՝ 136 հազար դրամ, Ջերմուկը՝ 131 հազար դրամ, Գորիսը՝ 130 հազար դրամ, Նոր Հաճընը՝ 129 հազար դրամ, Իջեւանը՝ 123 հազար դրամ, Բյուրեղավանը՝ 120 հազար դրամ 1 քմ դիմաց:

Հողի շուկայում հետեւյալ պատկերն է՝ 2013-ի մայիսին 2012-ի մայիսի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7,4 տոկոսով, աճուրդով վաճառքներինը՝ 3 տոկոսով:

2013-ի մայիսին 2013-ի ապրիլի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 24,3 տոկոսով, իսկ 2012-ի մայիսի համեմատ՝ 21,8 տոկոսով:

Մայիսին իրականացվել են հիփոթեքային գրավադրման 137 գործարքներ, որից 81-ը՝ Երեւանում: Ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում նվազել է 32,5 տոկոսով, իսկ մարզերում աճել՝ 36,6 տոկոսով: 2012-ի մայիսի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը Երեւանում նվազել է 19 տոկոսով, իսկ մարզերում՝ աճել 40 տոկոսով:

Այսպիսով, անշարժ գույքի շուկայում մայիսին գործարքների քանակը նվազել է, իսկ գները՝ մնացել անփոփոխ: Հիշեցնենք, որ այս տարվա փետրվար, մարտին գործարքների քանակի կտրուկ աճ էր արձանագրվել եւ թվում էր, թե անշարժ գույքի շուկայի աշխուժացման միտում է սկսվել: Սակայն ապրիլին եւ մայիսին արձանագրվեց հակառակ երեւույթը՝ գործարքների քանակը նվազեց: Ինչ վերաբերվում է գներին, ապա դրանք մնում են առանց էական փոփոխությունների:

## Տարածքում

# Մտորումներ Մեծամորի ԱԷԿ-ի թեմայով

Վերջին շրջանում «Հայռուսգազարդի» կողմից գազի գնի բարձրացման առիթով կազմակերպված հավաքներում հնչում է նաեւ «Տվեք մեզ ատոմակայանի էլէներգիան» պահանջը: Այնպիսի տպավորություն է տիրում, որ կարծես Մեծամորի ԱԷԿ-ի հզորությունը լիարժեք չի իրականացվում, կարելի է ավելացնել, եւ մենք գազի այրումից էլեկտրաէներգիա ստանալու խնդիրը կարող ենք կանխել, ասել է թե կախվածությունից ազատվել: Արդյոք հարցը բարձրացնողները քաջատեղյա՞կ են հայկական միջուկային էլեկտրակայանի հնարավորությանը, դրա շահագործման հուսալիության կարողունակությանը, ատոմակայան կոչվողի այլ առանձնահատկություններին: Թե՞ այն վստահությունն ունեն, որ ատոմակայան ասելով պետք է էլեկտրաէներգետիկ հիմնաբավություն հասկանալ, ծախսիր ինչքան կարող ես, հետն էլ արտահանիր, մտքում ունենալով նոր ԱԷԿ կառուցելու մտադրություն, որի էլ ողջ արտադրանքը կարտահանենք ու տարածաշրջանային առաջատար կդառնանք նաեւ այս ոլորտում: Բայց բավ է նման տրամադրությունների տրվել, փորձենք իրավիճակը կոնկրետ թվերով ներկայացնել:

Վերաշահագործումից հետո հայկական ատոմակայանը յուրաքանչյուր տարի թողարկել է 2-2,3 մլրդ կվտ. ժամ էլեկտրաէներգիա, որը կազմում է ՀՀ-ում արտադրված էլեկտրական հոսանքի 35-40 տոկոսը: Պարզ թվաբանական հաշվարկով ստացվում է, որ անկախացումից հետո հանրապետությունն սպառում է, տարբեր բնույթի կորուստները հաշվառած, 5-5,5 մլրդ կվտ.ժամ: Օրինակ՝ ԱԷԿ-ում տարբեր սարքավորումներ աշխատեցնելու, շենք-շինություններն ու տարածքը լուսավորելու նպատակով տարվա ծախսը հասնում է արտադրության 6-8 տոկոսին: Համանման վիճակ է ջերմակայաններում, որոնք նույնպես հսկայական տարածքներ են զբաղեցնում, որպիսիք չունեն հիդրոկայանները ու գերժամանակակից էլեկտրաարտադրական հզորությունները: 1 հայաստանաբնակի հաշվով ստացվում է տարեկան 2000 կվտ.ժ-ից պակաս էլեկտրաէներգիա: Թե ինչ թիվ է սա այլոց արտադրածի համեմատ, նշենք, որ ատոմակայան չունեցող Ավստրիայում 1 բնակչի հաշվով արտադրությունը 8000 կվտ.ժ է, նույնը հարեւաններ Չեխիայում եւ Շվեյցարիայում: Ինչպես Կենտրոնական Եվրոպայի այս երկրներում, այնպես էլ ողջ աշխարհամասում, տասնյակմիլիարդավոր կիլովատժամերին համարժեք էլեկտրաէներգիա է ստացվում արեւային ջրատաքացուցիչների օգնությամբ, որոնք տեղադրված են հարյուրհազարավոր առանձնատների ու բազմաբնակարան շենքերի տանիքներին, որպիսիք գրեթե չենք տեսնում Հայաստանում:



Այս առումով հետաքրքրություն առաջացրեց պարոն Վահան Համազասպյանի առաջարկը, որը հեղինակի տարօրինակ զգուշավորության ասեմ, թե գաղտնապահության հետեւանքով կարծես սպասվող շարունակությունը չի ունենում: Խնդրի տեխնիկական կողմի մեջ չմտնելով ընդամենը նկատեմ, որ սարքի օգնությամբ չրեր պատրաստելու եւ եվրոպական շուկայում կգ-ը 40-60 եվրոյով վաճառելու մտայնությունը չափից դուրս է լավատեսական: Եվրոպական սուպերմարկետները հեղեղված են աշխարհի չորս կողմերից այստեղ հասցվող տասնյակ տեսակների թարմ մրգերով, որոնց մատչելիությանը բազմիցս ենք անդրադարձել: Այնպես որ գաղափարի արդյունավետության հիմնավորումները այլ ուղղությամբ է պետք ծավալել:

Հայաստանաբնակներիս թերեւս առավել պետք է հետաքրքրի, թե էլեկտրաէներգիայի ինչ չափաբաժին են արտադրում համեմատաբար ցրտաշունչ, 4-5 ամիսներ ջեռուցման խնդիր ունեցող երկրները: Հյուսիսային բեւեռին մերձակա Կանադայում ու Շվեդիայում 1 բնակչի հաշվով էլարտադրությունը 17000 կվտ.ժ է, ատոմակայաններ չունեցող Ֆինլանդիայում ու Նորվեգիայում՝ համապատասխանաբար 15000 եւ 26000 կվտ.ժամ: Թե որտեղ են հյուսիսաբնակներն արտադրում էլհոսանքի մեզ համար առաջիկա տասնամյակներին անհասանելի այս քանակները, խնդրի մի կողմն է. հարցն առավել այն է, որ էլարտադրության պահանջ կա ու կա, որը մեզանում մասնագիտական միտքը չտեսնելու է տալիս, շարքային հայաստանցու մեջ էլ կարծիք կազմավորում, թե էլհոսանքի ավելցուկ ունենք, ուր որ է մի քանի միլիարդ կվտ.ժամ էլեկտրաէներգիա կարտահանենք, որը տարիներ շարունակ խոսացվում ու չի իրականացվում: Այս առումով տարօրինակ է մեր մամուլում հայտնված այն տեղեկատվությունը, թե Վրաստանը ՀՀ բարձրավոլտ ցանցերի օգնությամբ Իրան արտահանում է իրականացնում: Տարօրինակությունը թերեւս չափազանցություն համարենք, եթե փաստենք, որ տարիներ առաջ մեզնից էլհոսանք գնող հարեւանը հիմա տարեկան 9 մլրդ կվտ.ժ արտադրություն ունի: Մեր մյուս հարեւաններ Թուրքիայում եւ Իրանում 1 բնակչի հաշվով տարեկան էլարտադրությունը 3000 կվտ.ժամ է, մոտակա տարիներին նոր հզորությունների կառուցման պարագայում, երբ մենք անգամ նախագծվող ոչինչ չունենք: Եթե սխալ եմ, թող էներգետիկներն ինձ ուղղեն. էլեկտրաէներգետիկ առումով մենք տարածաշրջանի հետնապահն ենք իր բոլոր հետեւանքներով հանդերձ: Տհաճ է պատկերացնել, թե ինչ վիճակում կհայտնվենք, եթե գործել սկսեն էլեկտրածախսատար արդյունաբերական 1-2 հսկաները, որպիսի պահանջ հաճախ է հնչեցվում: Ինչ-որ մեկն ինչ-որ տեղում գիտի ակնկալվող հետեւանքների մասին եւ դրանց ընթացք չի տալիս:

Մտորումներս փորձեմ ավարտել Մեծամորի ԱԷԿ-ի շահագործումից մի քանի տարի անց ՀՍՍՀ բարձրագույն ղեկավարության առաջացրած անհանգստությունը ներկայացնելով, որին հանդիպեցինք անվանի գիտնական ու պետական գործիչ Ֆադեյ Սարգսյանի «Կյանքի դասերը» հուշագրությունում: Հեղինակը փաստում է. «(ամենաբարձր մակարդակով) մեզ հաջողվեց ստանալ կառավարական որոշում, որտեղ նշված էր. կայանը կառուցվել է մինչեւ 1982 թվականի անվտանգության նորմերի ու կանոնների կիրառումը եւ ունի բազմաթիվ շեղումներ դրանցից, ընդ որում՝ շատ լուրջ եւ գործնականում անուղղելի...

Հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ հայկական ատոմակայանը անվտանգության տեսակետից չի համապատասխանում գործող նորմերին ու կանոններին: Հանձնաժողովի ակտը ԽՍՀՄ պետատոմհսկողություն եւ ՀԽՍՀ նախարարների խորհուրդ ուղարկվեց 1986 թ. ապրիլի 24-ին, այսինքն՝ Չեռնոբիլի աղետալի վթարից երկու օր առաջ»:

Եվ ի՞նչ. 1000 օր անց, ԽՄԿԿ քաղբյուրոյի որոշմանը համապատասխան, ընդունվեց ԽՍՀՄ նախարարների խորհրդի որոշումը 1989 թ. փետրվարի 22-ից Մեծամորի ԱԷԿ-ի առաջին բլոկի եւ 1989 թ. մարտի 18-ից երկրորդ բլոկի շահագործումը դադարեցնելու մասին: Սա մեզ վկայում է այդ տարիների ՀԽՍՀ վարչապետ Ֆադեյ Սարգսյանը: Դա որեւէ մեկնաբանության կարիք չունի:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Ավստրիա, Գրաց**

# Քաղաքի նոր ավտոբուսներն ուրախացրել են գյումրեցիներին

Հունիսի 26-ից Գյումրու փողոցներում գեղեցիկ ու ժամանակակից նոր ավտոբուսների հայտնվելը քաղաքի համար վառ իրադարձային նորություն էր, որը բնակավայրի ընդհանուր գորշ ու տխուր պատկերին մի անսովոր լուսավոր երանգ է հաղորդել: Խավարում երկար ժամանակ խարխափողի դեմ հայտնված հույսի բարակ շողի պես...

Հիշեցնենք, վերջին տարիներին ներքաղաքային հասարակական տրանսպորտից համարյա ամբողջովին զրկված եւ երթուղային տաքսի «Գազել»-ների անայլընտրանք տիրապետությանը հանձնված այս քաղաք են ներկրվել առայժմ 10 նոր, չինական արտադրության հարմարավետ ավտոբուսներ, որոնք աշխատելու են ներքաղաքային երկու երթուղիներում: Քաղաքապետ Սամվել Բալասանյանը հավաստիացրել է, որ սա սկիզբն է միայն: Նշված օրը 1-ին երթուղու ավտոբուսները սկսել էին գործել: Համայնքի ղեկավարի կարգադրությամբ դրանք մինչեւ ամսվա վերջ ուղեւորներին կսպասարկեն անվճար:

Գյումրեցիների դեմքին վերջին տարիներին հազվադեպ հանդիպող ժպիտ էր հայտնվել: Սա այն դեպքերից էր, երբ մարդկանց արձագանքը, կարծիքն իմանալու համար նրանց հարցեր տալու կարիք չէր զգացվում. հաճելի անակնկալից շոյված ուղեւորներն իրենք բացվում էին, խոսում, արտահայտում իրենց մտքերը, կիսում միմյանց հետ: Ավտոբուսում կողքիս կանգնած հաճելի երիտասարդ աղջիկը, թե՞ կինն ասաց՝ երեկ հեռուստատեսությամբ տեսա՝ չհավատացի աչքերիս, ասի էս հեքիաթ է, ինչ է: Բոլորին ուրախացնող իրադարձությունը մարդկանց միավորել էր, պայծառ, բարի դարձրել: Իրար ու իջնելիս նաեւ վարորդին շնորհավորում էին, անփորձանք երթեւեկություն մաղթում: Վարորդն էլ՝ կիրթ, բարյացակամ, ուղեւորների նկատմամբ հարգալից վերաբերմունք ուներ: Մարդիկ նորից սովորում էին բուն կանգառներում իջնել ու մեքենա բարձրանալ, երիտասարդները կանգնում, մեծերին տեղ էին զիջում: Եվ նման այլ, մի մասը՝ կարծես մոռացված «մանրուքներ»...



«Ոտքներս խերով լինի»,- հերթական կանգառում ավտոբուս բարձրանալով, գորվալից ասաց տարեց կինը: Մի տղամարդ ուղեւոր էլ, ելնելով ու տեսնելով փոխադրամիջոցի ընդարձակ սրահը, ասես լիաթոք շունչ քաշեց. «Էս ինչ լավ բան են արել, հազիվ մարդիկ մի քիչ ուրախացան»: «Գազելից լավ չէ՞»,- ասաց մեկ ուրիշը, որին մեկը պատասխանեց՝ հարյուր անգամ, մյուսն էլ թե՝ հազա՜ր անգամ: Գազելների հատկապես նեղվածք վիճակն էին մարդիկ նշում, նաեւ դրանց շատ վարորդների անհամապատասխանությունը տվյալ գործին՝ եւ մասնագիտական, եւ բարեկրթության առումով: Մի ուղեւոր այդ մասին պատկերավոր կատակեց, թե այսինչ երթուղու վարորդները բոլորը «մանկապարտեզ ավարտածներ են»:

Առաջին օրվա ուրախության պահ էր: Մեկ օր, մի քանի օր, հետո երեւույթը կդառնա սովորական, առօրեական, մարդիկ նորից կհանձնվեն օրվա հոգսին: Բայց քաղաքի կյանքի գորշությանը, դժվար, տխուր կյանքին արդեն մի գույն, մի հույս ավելացավ: Եթե նաեւ սկսված գործն անհրաժեշտ շարունակություն ունենա: Քաղաքապետը հայտնել է, որ առաջիկայում կներկրվի նոր ավտոբուսների եւս մի խմբաքանակ, կտեսնենք դրանք ինչպես են աշխատում այս քաղաքում, մարդիկ ինչպես են գնահատում: Եթե պահանջվի, կխրախուսվի նաեւ այլ տեսակի ուղեւորատար մեքենաների ներկրումն ու օգտագործումը քաղաքում:

Ըստ գնահատումների, քաղաքի երթուղիների լիարժեք սպասարկման համար անհրաժեշտ է ունենալ մոտ ութ տասնյակ ավտոբուս, համայնքային իշխանությունը խոստանում է մի քանի տարվա ընթացքում հասնել դրան: Նաեւ նոր կանգառներ են սարքավորվելու (նման մեկը մեզ արդեն հանդիպեց), փողոցների նորոգմանն ավելի ուշադրություն է դարձվելու:

Կարծում ենք՝ Գյումրու քայքայված փողոցային ցանցի հիմնավոր նորոգման հարցում, որի ուղղությամբ, ի դեպ, այս տարի քաղաքի կենտրոնում բավական աշխատանք կատարվեց, խիստ անհրաժեշտ է պետության, կառավարության էական ֆինանսական աջակցությունը: Այլապես նոր ավտոբուսներն այստեղ արագ կջարդվեն ու չեն կարողանա գործել: Իսկ իրենց մենաշնորհը կորցնող գազելների «գծատերերը» պետք է ըմբռնեն ու հասկանան, որ սրանով քաղաքին վերադարձվում է նրանից խլվածը եւ իրենք, կորցնելով գուցե գերշահույթները, սովորեն բավարարվել շահույթով: Թող գազելներն էլ իրենց չափով, իրենց տեղում գործեն որպես այլընտրանք, բայց այլեւս չփոխարինեն հասարակական տրանսպորտին, հանիրավի չզբաղեցնեն, չգրավեն նրա տեղը:

Իսկ որպեսզի քաղաքն ապրի, նաեւ այլ քայլեր են պետք: Իմ նստած ավտոբուսի վարորդի հետ զրուցող ուղեւորն ասում էր՝ անհնարին բան չկա, կարելի է, թեկուզ, այսպիսի ավտոբուսներ մեզ մոտ էլ արտադրել, դրա համար մի քիչ ներդրում է պետք ու կազմակերպչական ջիղ: Ահագին մարդիկ կաշխատեն, աշխատանք կունենան: Իմ զրուցակցուհին էլ էր ասում՝ մի քիչ աշխատատեղեր բացվեն, մարդիկ իրենց երկրում աշխատեն, չգնան...

**ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ**

# «Ազատության» խլացումը՝ քննարկման թեմա ԱՄՆ-ի եւ Ադրբեջանի միջեւ

Մամուլի հանդեպ վերաբերմունքն Ադրբեջանում այն ոչ մեծաթիվ ոլորտներից է, երբ համեմատությունը, որքան էլ Հայաստանում մամուլի ազատության առումով բողոքելու տեղ կա, միշտ ի վնաս Ադրբեջանի է, թեեւ Ադրբեջանի ֆոնին լավ երեւալու հավակնություն ունեցող Հայաստանը ոչ մի բան չի շահում այդօրինակ համեմատությունից:

Որ լրագրողների հանդեպ ճնշումներ են գործադրվում, այն էլ զանգվածաբար, Բաքվում տեղի ունեցող որեւէ իրադարձության համատեքստում, բնավ զարմանալի չէ, ինչպես զարմանալի չէ, երբ նավթային դոլարները քարոզչական նպատակներով եւս ծախսող ադրբեջանական իշխանությունները նաեւ ժամանակակից տեխնիկական միջոցներով են փորձում խափանել մամուլի աշխատանքը:

Լուրերը, թե Ադրբեջանում «Ազատություն» ռադիոկայանի աշխատանքին միջամտելու փորձեր են արվում, դժվար թե ադրբեջանցի ինչ-որ հանքափորի ձեռքով է արվում կամ էլ նրա ցանկությամբ:

Հունիսի 27-ին՝ ԱՄՆ պետքարտուղարության մամուլի գրասենյակի տնօրեն Պատրիկ Վենթրելին ճեպազրույցի ժամանակ «Ամերիկայի ձայն»-ի լրագրող Սյուզան Պրեստոն հետաքրքրվել է, թե, «Ազատության» տեղեկացմամբ, նրանց հաղորդումները Ադրբեջանում միջամտության են ենթարկվում այնպես, որ կարծես խափանումներն ու ձայնի խլացումը արվում են ադրբեջանական կառավարության կողմից: «Հետաքրքրական է, թե որն է ԱՄՆ պետքարտուղարության արձագանքը դրան եւ ինչ կարող է դա նշանակել ԱՄՆ-Ադրբեջան հարաբերությունների համար», հարցրել է լրագրողը: Ի պատասխան Վենթրելը հայտարարել է, որ իրենք ծանոթացել են այն զեկույցներին, որոնց համաձայն, «Ազատություն» ռադիոկայանը եւ մի շարք այլ լրատվամիջոցներ արբանյակային հեռարձակման դժվարություններ ունեն Ադրբեջանում եւ Ադրբեջանի ուղղությամբ:

«Մենք շփումներ ենք ունեցել ռադիոկայանի եւ Ադրբեջանի ղեկավարության հետ հարցի քննարկման նպատակով», տեղեկացրել է պետքարտուղարության ներկայացուցիչը, ավելացնելով, որ Միացյալ Նահանգների մոտեցմամբ՝ ռադիոկայանը կարեւոր ներդրում է իրականացնում ադրբեջանական լրատվական դաշտում:

«Ռադիոկայանի հաղորդումները օբյեկտիվ եւ անկախ լրագրության պահանջված մոդել են Ադրբեջանում, եւ Միացյալ Նահանգները մեծապես աջակցում է Ադրբեջանում մամուլի ազատությանն ու ազատ արտահայտվելու իրավունքին», ասել է Վենթրելը:

Թե որքանով է նշվող ռադիոկայանը օբյեկտիվ ու անկախ, թեկուզ Ադրբեջանում, կարելի է դատել նաեւ մի շարք հրապարակումներից, որոնց **«Ազգ»**-ում անդրադարձել է ռադիոկայանի նախկին աշխատակիցներից մեկը: Սակայն ակնհայտ է, որ եթե հարցը ամերիկյան պետքարտուղարության կողմից քննարկվում է ռադիոկայանի եւ ադրբեջանական ղեկավարության հետ, ուրեմն մեղադրանքները, թե խափանումներն իրականացվում են Ադրբեջանի կառավարության կողմից, բնավ էլ անհիմն չեն:

**Վ.ՊՈՂՈՍՅԱՆ**

***Հ.Գ.*** *Շատ հետաքրքրական է, որ ճեպազրույցի ավարտից ընդամենը 24 րոպե անց ողջ հանդիպման սղագրությունը արդեն տեղադրված է եղել պետքարտուղարության կայքում:*

ԱՆՕՐԻՆԱԿԱՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՈՒՄ

# Սենատը հավանություն տվեց ներգաղթին առնչվող օրինագծին



**ԱՄՆ Կոնգրեսի վերին պալատը հավանություն է տվել ներգաղթյալների հետ կապված բարեփոխման օրինագծին, որը երկրի տարածքում անօրինական կարգով ապրող օտարերկրացիներին թույլ է տալիս օրինականացնել իրենց ներկայությունը: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը: Օրինագծի օգտին քվեարկել են 68, դեմ՝ 32 սենատորներ:**

**Ներգաղթի քաղաքականության բարեփոխման նախագիծը 2013-ի հունվարին ներկայացրել էին հանրապետական եւ դեմոկրատ սենատորները: Փաստաթղթին հավանություն էր տվել նախագահ Օբաման: Մայիսի վերջերին այն հաստատել էր Սենատի իրավաբանական կոմիտեն:**

**Օրինագիծը ԱՄՆ-ում անօրինական հիմունքներով ապրող 11 մլն ներգաղթյալներին թույլ է տալիս մի շարք պայմանների կատարման դեպքում օրինականացնել երկրում իրենց ներկայությունը եւ ապագայում հավակնել ԱՄՆ քաղաքացիության: Անօրինական ներգաղթյալները մասնավորապես ստիպված կլինեն տուգանք վճարել եւ մարել հարկային պարտքերը: Միաժամանակ օրինագիծը նախատեսում է 46 մլրդ դոլարի հատկացում պետական սահմանի պաշտպանության ուժեղացման եւ ամերիկյան այցագրերի հանձնման համակարգի կատարելագործման նպատակներով:**

**Նախագահ Բարաք Օբաման սենատորներին շնորհակալություն է հայտնել օրինագծի ընդունման համար, ավելացնելով, որ հիմա փաստաթղթի ճակատագիրը կախված է կոնգրեսականներից:**

***«ՋԵՆԵՐԱԼ ՍՏԱՆԴԱՐԴ ՔԸՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ***
***0021 Երեւան, Ադոնցի 10***
***Հայաստանի Հանրապետություն***
***Հեռ.՝ +374 60 44 10 41***
***Ֆաքս՝ +374 60 44 10 41 (ներքին՝ 102)***
***Էլ.հասցե՝ general@gsc.am***

**Անկախ աուդիտորական եզրակացություն**
**«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի հիմնադրին**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետեւ՝ «ՊՈԱԿ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը եւ այլ բացատրական տեղեկատվություն:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

